

## Երեւանի մամուլի ակումբի՝ 1995-1996թթ. ֆինանսական գործունեության

### ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մուտքի վճարների եւ տարեկան անդամավճարների ընդհանուր գումարը, ընդգրկելով մասնավոր անձանց կամավոր նվիրատվությունները, 1995 թվականի հուլիսի 18-ից (կազմակերպության հիմնադրման օրը) մինչեւ 1996-ի դեկտեմբերի 31-ը կազմել է 583656 դրամ:

Այն ծախսվել է.

- բանկում դրամային եւ տարադրամային հաշիվների բացման համար՝ 13523.70 դրամ,

- հեռախոսային խոսակցությունների եւ ֆաքսիմիլային ուղերձների համար՝ 126569 դրամ,

- փոստային առաքումների համար՝ 34102 դրամ,

- մամուլի ակումբի անդամների վկայականների պատրաստման համար՝ 51000 դրամ,

- փոքրարժեք գույքի (հեռախոսային փոխարկիչ, համակարգչային ստեղնաշարի պլիտակներ, համակարգչի մկնիկի տակդիր, երկկոճակ մկնիկ, ներկատուփ՝ պատճենահանման համար, թղթի բարձակ) համար՝ 33068.65 դրամ,

- հիմնական միջոցների (տպիչ-համակարգիչ միացման լար, համակարգչի բարձրախոսներ, քառալիք հեռախոսակայան, համակարգչի ծրագրային ապահովում) համար՝ 195039.65 դրամ,

- հիմնական ֆոնդերի հարկերը կազմել են 5000 դրամ:

ԵՄԱ-ի բոլոր ծախսերը, ըստ Երեւանի մամուլի ակումբի կանոնադրության, համաձայնեցված են ԵՄԱ-ի վարչության հետ: Բոլոր եկամուտներն ու ծախսերը վավերացված են եւ պահվում են մամուլի ակումբի հաշվապահությունում:

1997 թվականի հունվարի 1-ի դրությամբ միջոցների մնացորդը դրամարկղում կազմել է 125353 դրամ:

Մամուլի ակումբի համար կամավոր կատարած աշխատանքի դիմաց մուտքի եւ տարեկան անդամավճարներ մուծելուց ազատվել են 12 հոգի (7-ը՝ 1995 թվականին եւ 5-ը՝ 1996-ին): Յուրաքանչյուր նման դեպքի վերաբերյալ կա ԵՄԱ-ի վարչության հատուկ որոշում:

---

***Մույն հաշվետվությունն ընդգրկում է միայն այն գործունեությունը, որտեղ ֆինանսները Երեւանի մամուլի ակումբն է տնօրինել:***